

յանձնել աշխարհական տեղակալներու Այսպէս՝ տասն և մէկ ամիս աշխարհական տեղակալներով կառավարուեցաւ աթոռը, բայց նսխկին անկեալ պատրիարքը՝ Դաւիթ Արեւելցի, 1650ին կրկին յաջողեցաւ կաշառքով գրուել աթոռը, բայց հազիւ չորս ամիս մնաց և տապալեցաւ. ապա դարձեալ աշխարհական տեղակալները վարեցին Պատրիարքարանի գործերը:

Կ'երեւի թէ աշխարհական տեղակալները, տեղի չտալու համար որ եկեղեցականներ իրենց շահատակութեանց ասպարէզ գտնեն, համաձայնած էին, որ ռեւէ եկեղեցական չնստառուի Պոլիս, որպէսզի տաւրի չունենայ պատրիարքական աթոռը գրուել փորձելու:

Այս պատճառով՝ Յովհաննէս վրդ. Վանեցի դժուարութեան հանդիպած է և ծանօթ Վանեցիներու միջամտութեամբ միայն արտահուած է քնակելու Ս. Աստուածածին Մայր եկեղեցին:

Յովհաննէս վրդ. Վանեցիի Պոլիս գալուն շարժառիթը հաւանօրէն ժողովարարութիւն էր, վասնզի 1647 Մարտ 28ին (տես Եր. Լսլայեան: Յուլիան Զայե-րեմ Զեռագրաց Վասպուրականի», էջ 907-908) և 1648 Ապրիլ 2ին (տես Առաքել Դաւրիթեցի, Գ. տպ. էջ 489-494 եւ Դիւան Ժ. հտ. էջ 62-3 և 104 եւ 124) երկու սոսկալի երկրաշարժներ պատահած էին Վանի մէջ և փլած էին շատ մը վանքեր և եկեղեցիներ:

Թերեւս ոմանք կասկածին, որ այս և յաջորդ տարուան երկրաշարժները նոյնն են, քանի որ երկուքին համար ալ ըստած է, թէ Առաք Ուրբաթ օր պատահած են, միայն 1647ինը՝ Մարտ 28ին, և 1648ինը՝ ըստ Առաքել Դաւրիթեցիի և ըստ ուրիշ երեք յիշատակարաններու՝ տեղի ունեցած է Ապրիլ 2ին, 1647ի